ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԸ

Գ. Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

1920 թ. դեկտեմբերի 4-ին, երբ Հայաստանի հեղկոմը՝ Սարգիս Կասյանի գլխավորությամբ, ժամանեց Երևան, մի խումբ լրագրողներ, Աշոտ Հովհաննիսյանի ղեկավարությամբ, պատրաստում էին Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայաստանի խորհրդային կառավարության առաջին պաշտոնաթերթի՝ «Կոմունիստի»[1], անդրանիկ համարը, որը և լույս տեսավ դեկտեմբերի 5-ին։

«Ընկեր բանվորնե՛ր, գյուղացինե՛ր, զինվորնե՛ր,— գրում էր թերթն իր առաջին համարներից մեկում,— «Կոմունիստը» ձեր թերթն է, ձեզ համար է մտածում, ձեր աչքը բաց անում։ Դուք էլ գրեցեք ձեր գյուղից, ձեր արհեստանոցից, ձեր զորամասերից։ Իրար խելք-խելքի տալով դաշնակների քանդած երկիրը վերաշինենք... Հիշեցեք, որ միայն կոմունիստական կուսակցությունը կարող է ամուր հիմքերի վրա դնել Հայաստանի աշխատավորության դիկտատուրան, կազմակերպեցեք կոմունիստական խմբակներ, կապ հաստատեցեք Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի, նրա օրգան «Կոմունիստի» հետ։ Կազմակերպեցեք տեղերում հեղափոխական կոմիտեներ»[2]։

Սովետական Հայաստանի առաջին պաշտոնաթերթի ստեղծման ու գաղափարական կոփման գործում իրենց ավանդը ներդրեցին Աշոտ Հովհաննիսյանը, Ասքանազ Մռավյանը, Արտաշես Կարինյանը, Եղիա Զուբարը, ապա նաև ականավոր ժուռնալիստ-հրապարակախոս, կուսակցական ու պետական խոշոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը (Ալ. Մարտունի), որոնք անցել էին բոլշևիկյան մամուլի հարուստ դպրոցը, ակտիվորեն մասնակցել Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում հրատարակվող մի շարք հեղափոխական թերթերի լույս ընծայմանն ու խմբագրմանը։

«Մեծ չէր խմբագրական կազմը,— հիշում է Եղիա Զուբարը,— խմբագրում էր Աշոտ Հովհաննիսյանը, ես քարտուղարն էի ու երես կապողը»[3]։ Հե-

---

1 *Թերթը 1920 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 1921 թ. մայիսի 27-ը լույս է տեսել «Կոմունիստ», իսկ այնուհետև «Խորհրդային Հայաստան» վերտառությամբ։ Սկզբում միայն ՀԿԿ Կենտկոմի օրգանն էր, հետո (№ 14-ից) ՀԿԿ Կենտկոմի և ՀՍԽՀ հեղկոմի, իսկ № 41-ից՝ ՀԿԿ Կենտկոմի, Երևանի կոմիտեի և բանվորագյուղացիական կառավարության։*

2 *«Կոմունիստ», 9. XII. 1920։*

3 *«Խորհրդային Հայաստան», 11. V. 1922։*

տադայում «խմբագրական» այս կազմին ավելացան Ա. Մռավյանը և Ա. Կարինյանը[4], որոնք Ե. Զուբարի հետ միասին երկար տարիներ խմբագրում էին թերթը[5]։

Ծանր ու դժվարին էին դեկտեմբերյան այն օրերը, երբ ծնվեց «Կոմունիստը»։ Ընդամենը յոթ օր էր, որ պաշտոնապես գոյություն ուներ խորհրդային իշխանությունը Հայաստանում, ժողովուրդը, երկիրն ապրում էին իրենց պատմության արմատական բեկման փոթորկալից մի ժամանակաշրջան։ «Ոտքի վրա էր աշխատում հեղկոմը,— դրել է Եղիա Զուբարը,— ոտքի վրա էր կազմավերպվում կուսակցությունը, ոտքի վրա էինք դրում ու խմբագրում մենք՝ թերթի աշխատակիցներս»[6]։ Ծայրաստիճան քայքայված էր ժողովրդական տնտեսությունը։ «Երկիրը, սպառված միջոցներով, հիմն ի վեր խախտված իմպերիալիստական և ազգայնական կռիվներից, լցված սովալլուկ և անապաստան գաղթականությամբ ու որբերով, հյուծված, մերկ, հոգնած նախկին ապիկար կառավարության ավանտյուրաներից արագորեն գնում էր դեպի անդունդը»[7]։

«Կոմունիստի» առաջնահերթ խնդիրն էր աշխատավորությանը պարզ ու մատչելի բացատրել նոր հասարակարգի բնույթը, նրա էությունն ու նպատակները, ցույց տալ կուսակցության ու կառավարության ձեռնարկումների քաղաքական ու տնտեսական նշանակությունը, նրանց ներքին ու արտաքին քաղաքականության սկզբունքները։

Առաջին համարում թերթը հռչակում էր Հայաստանի սովետական իշխանության նպատակները, նրա անելիքը ներքին ու արտաքին քաղաքականության մարզերում։ Մանուկ խորհրդային իշխանությունը, գրում էր թերթը, իր առաջ խնդիր է դնում ջախջախել Անտանտի գործակալը դարձած դաշնակցության տիրապետությունը, հաստատել ժողովրդական իշխանություն, ապա եռանդուն գործունեության կոչել աշխատավոր մարդկանց՝ երկիրը վերաշինելու, քայքայված տնտեսությունը վերականգնելու համար։

«Կոմունիստի» նույն համարում տպագրվեց Վ. Ի. Լենինի հանրահայտ հեռագիրը Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանին, որով նա ողջունում էր «Իմպերիալիզմի լծից ազատագրված աշխատավորական Հայաստանը»։ Տպագրվեց նաև Ս. Կասյանի հեռագիրը Վ. Ի. Լենինին, որով համաշխարհային հեղափոխության առաջնորդին հայտնվում էր, որ Հայաստանի աշխատավորներն իրենց ձեռքն են վերցրել իշխանությունը, հայտարարելով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Առաջին համարներում զետեղվել են նաև Կովկասյան ռազմաճակատի հեղափոխական խորհրդի նախագահ Ս. Օրջոնիկիձեից, Ս. Մ. Կիրովից, Սովետական Դաղստանի և Սովետական Ադրբեջանի հեղկոմներից, Գրոզնի քաղաքի արհմիություններից, Կրասնոդարի, Ղրիմի աշխատավորներից, սովետական ու կուսակցական օրգաններից ստացված հեռագրերը, որոնք «պրոլետարական բերկրանքի զգա-

---

4 Մլի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 9, թ. 8։

5 Թերթը հիմնականում ղեկավարում էր երեք հոգուց բաղկացած խմբագրական կոլեգիան։ 1921 թ. մի կարճ ժամանակ թերթը ստորագրել են պատասխանատու խմբագիրներ Վահան Երեմյանը (հունվարի 26—փետրվարի 17-ը) և Ասքանազ Մռավյանը (ապրիլի 23—մայիսի 26-ը)։

6 «Խորհրդային Հայաստան», 11. V. 1922։

7 «ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը», Երևան, 1923, էջ 66։

ցումով» անկեղծ եղբայրական ողջույն են հղում «իմպերիալիզմի և նացիոնալիզմի լծից ազատագրված հայ ժողովրդին»։

1920 թ. դեկտեմբերին Հայաստանի քաղաքներում ու գյուղերում տեղի ունեցող բազմամարդ միտինգներում աշխատավորները ջերմորեն ողջունում էին նոր կարգերը, երդվում հավատարիմ մնալ նրանց սկզբունքներին, ջանքեր չխնայել հեղափոխության հաղթանակն ամրապնդելու, երկիրը վերաշինելու գործում։ Այդ օրերին թերթի էջերում երևան եկան «Աշխատավորների միտինգներ», «Միտինգներ և ժողովներ» բաժինները, որտեղ ընդարձակ ինֆորմացիաներ էին տպագրվում այդ միտինգների մասին, մեջբերումներ կատարվում նրանց ընդունած բանաձևերից ու որոշումներից։ Դեկտեմբերի 8-ին «Կոմունիստը» տպագրեց Երևանի աշխատավորների ու զինվորների բազմահազարանոց միտինգի ընդարձակ ինֆորմացիան ու մասնակիցների հեռագիրը Վ. Ի. Լենինին։ Երևանի աշխատավորությունը մեծ առաջնորդին հավաստում էր, որ, մտնելով սովետական հանրապետությունների պրոլետարական ընտանիքի մեջ, հետևելով Հոկտեմբերյան հեղափոխության հերոսական օրինակին, մեր «երիտասարդ հանրապետությունը համարձակ և անվախ կգնա դեպի ապագան, բնավ չկասկածելով, որ աշխատանքը կհաղթի կապիտալին»[8]։

Այդ միտինգների լուսաբանումը թերթի էջերում զգալիորեն նպաստեց աշխատավորական զանգվածների ինքնագիտակցության արթնացմանն ու հեղափոխական տրամադրությունների բարձրացմանը։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրից հեղկոմն ընդունեց մի շարք դեկրետներ ու որոշումներ, որոնց հիմնական նպատակը պրոլետարիատի դիկտատուրայի օրգանների ստեղծումն ու ամրապնդումն էր։ Կազմակերպվեցին Հայկական ԽՍՀ ժողկոմատները, դատական ու օրենսդրական մարմինները, իրենց լիազորություններից զրկվեցին դաշնակցական կառավարության արտասահմանի դիվանագիտական ներկայացուցիչներն ու միսիաները, չեղյալ հայտարարվեցին մյուս երկրների հետ դաշնակցականների կնքած պայմանագրերը, ազգայնացվեցին հողը, նրա ընդերքը, անտառները, մասնավոր բանկերը, գործարանները։ «Կյանքը նորանոր խնդիրներ է դնում կուսակցության առաջ,— գրում էր թերթը,— հարկավոր է վերլուծել դրանք. հրապարակվում են հազար ու մի դեկրետներ, հրամաններ, հարկավոր է պարզաբանել այդ դեկրետները և հրամանները, ցույց տալ դրանց կիրառման եղանակները, որպեսզի դրանք մեռած տարր չմնան ոչ միայն կենտրոնի ու տեղերի խորհրդային հիմնարկների համար, այլև լայն մասսաների համար։ Չէ՞ որ խորհրդային իշխանության դեկրետները չորուցամաք զակոններ չեն, այլ նրա բանվորա-գյուղացիական քաղաքականության կենդանի արտահայտությունը»[9]։

«Կոմունիստը», որպես կանոն, տպագրում էր ընդունված այս կամ այն նոր հրամանը, դեկրետը կամ որոշումը, ապա նույն կամ հաջորդ համարում մեկնաբանում դրա էությունը, քաղաքական նշանակությունն ու տնտեսական արդյունավետությունը, նշում կուսակցական, արհմիութենական, սովետական մարմինների անելիքները դրանք կենսագործելու համար։ Երկրորդ համարից

---

8 «Կոմունիստ», 8. XII. 1920։

9 «Խորհրդային Հայաստան», 26. VI. 1921։

թերթի էջերում հաստատուն տեղ գրավեցին «Բանվորագյուղացիական կառավարության հրամաններն ու դեկրետները» (երբեմն էլ պարզապես «Դեկրետներ, հրամաններ») խորագիրը։

Քայքայված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու համար հարկավոր էր կանոնավորել պետական տնտեսությունն ու ֆինանսները, մշակել տնտեսության կարգավորման ընդհանուր ծրագիրն ու նորմաները, փոխադարձաբար համաձայնեցնել և միավորել կենտրոնական ու տեղական տնտեսական հիմնարկությունների գործունեությունը։ Այս նպատակով էլ Սովետական Ռուսաստանի օրինակով, հեղկոմը դեկրետ հրատարակեց ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության խորհուրդ ստեղծելու մասին։ «Կոմունիստը» տպագրեց այդ դեկրետը, ապա և հատուկ առաջնորդող հոդվածով պարզաբանեց պետական այդ կարևորագույն օրգանի դերը, նպատակներն ու խնդիրները։ «Խորհրդի դերը կայանում է նրանում, որ նա իր ղեկավարության տակ կենտրոնացնի երկրի ամբողջ արդյունաբերությունը և զարկ տա արտադրողական ուժերի հետագա զարգացմանը»[10],— ասվում էր թերթի առաջնորդողում։ Հաղթանակած պրոլետարիատը, ի հակադրություն կապիտալիստական արտադրության, իր ձեռքն է վերցնում ամբողջ արդյունաբերությունը, կենտրոնացնելով դրա բոլոր ճյուղերը մի վարչության մեջ, և, հաշվի առնելով իր դասակարգային ու հեղափոխության հաղթանակի շահերը, զարկ է տալիս արտադրողական ուժերի զարգացմանը. «Ժողտնտխորհը պրոլետարիատի տնտեսական քաղաքականությունը ղեկավարող այն օրգանն է, որի միջոցով նա երկրի տնտեսությանը տալիս է կոմունիստական հիմունքներ»[11]։

Նույնպիսի հակիրճ, բայց գործնական մեկնաբանություններ է տպագրել թերթը մշակութային արժեքները ազգայնացնելու, հողը, մի շարք գործարաններ պետականացնելու վերաբերյալ դեկրետների առթիվ։

Դեկրետների ընդունումը, նրանց մասսայականացումը հսկայական հեղափոխականացնող նշանակություն ունեցան թե Սովետական Ռուսաստանում, թե մեր հանրապետությունում։ Դեկրետները, ասում է Վ. Ի. Լենինը, ծառայեցին որպես պրոպագանդայի ձև, դրանք բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ վստահություն ներշնչեցին խորհրդային կառավարության նկատմամբ։ «Այդ մի ժամանակ էր, մի շրջան, որն անհրաժեշտ էր հեղափոխության սկզբին, առանց դրան մենք հեղափոխական ալիքի գլուխ չէինք կանգնի, այլ քարշ կգայինք նրա պոչից»[12]։

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման բնագավառում հեղաշրջող նշանակություն ունեցավ ագրարային հարցի լուծումը։ Հողային հարցը Հայաստանում ամենասուր և ամենաբարդ, միաժամանակ անհապաղ լուծում պահանջող խնդիրներից մեկն էր, քանի որ Հայաստանին հատուկ էին սակավահողությունը, բնական պայմանների ու հողատեսքերի ընդգծված բազմազանությունը, դաշնակցականների տիրապետության ժամանակ հողային հարաբերություններում ստեղծված քաոսը, կամայականությունը։ Ավելին, Արարատյան դաշտում ապաստան էին գտել թուրքական յաթաղանից փրկված ավելի քան 200 հազար գաղթականներ, որոնց մի զգալի մասը հող էր պա-

10 «Կոմունիստ», 2. II. 1921։

11 Նույն տեղում։

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 359—360։

հանջում։ Նման պայմաններում անհրաժեշտ էր հողաշինարարությունը իրականացնել զգույշ, բազմակողմանիորեն հաշվի առնելով հանրապետության յուրահատկությունները։ ՀՍԽՀ հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի դեկլարացիայում նշվում էին Հայաստանում ագրարային հարցի լուծման հիմնական սկզբունքները[13]։

Պատմական այս խոշոր ակտին հաջորդեց «Հողերի պետականացման մասին» հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 28-ի դեկրետը, որով ազգայնացվում էին արքունական, եկեղեցական, վանքապատկան, վակուֆային, մզկիթների, իրավական անձերի և մասնավոր հողերը՝ դրանք հողազուրկ և սակավահող գյուղացիներին ու գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողներին բաշխելու նպատակով։ Հեղկոմի հետագա դեկրետներով ազգայնացվում են անտառները, հողի ընդերքի հարստությունները, ջրային ռեսուրսներն ու ոռոգման սիստեմները, պետականացվում են մի շարք կալվածքներ Դիլիջանի, Ղարաքիլիսայի գավառներում։

«Կոմունիստ» թերթի էջերում մեկնաբանվում էին հողային հարցի լուծման վերաբերյալ կուսակցության և կառավարության մշակած միջոցառումները, առանձին հոդվածներով և տեղերից ստացվող նամակ-թղթակցություններով ցույց տրվում այդ միջոցառումների կենսագործման ընթացքը, բացահայտվում թերությունները, նշվում դրանց վերացման ուղիները։

Նշելով, որ Հայաստանը սակավահող երկիր է, ունի գյուղական բնակչության ոչ որոշակի շերտավորում, թերթը խորհուրդ է տալիս զգույշ և խելացի մոտեցում ցուցաբերել հողային հարցի լուծման գործում, տարբերել ունևորը չունևորից, հնարավորին չափ վերացնել հողացրվածությունը, բազմակողմանիորեն հաշվի առնելով հողակտորների որակը, պիտանիությունը[14]։

Վ. Ի. Լենինի այն ցուցումը, որ սոցիալիզմի հիմքի կառուցման համար առաջին հերթին անհրաժեշտ է բարձրացնել գյուղատնտեսական արտադրությունը, սովետական իշխանության հաղթանակի առաջին իսկ օրից, դրվեց Հայաստանի կոմկուսի գործունեության հիմքում։ Գյուղատնտեսության վերականգնումն առանձնապես հրամայական էր դառնում, քանի որ գնալով ավելի սուր բնույթ էր ընդունում պարենային ճգնաժամը, մոլեգնում էր սովը։ Կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցները պրոպագանդելու, գյուղացիական զանգվածների ուժերը համախմբելու և դրանք 1921 թ. գարնանացանի հաջող կատարմանն ուղղելու նպատակով, 1921 թ. հունվարի 6-ից թերթը բացեց «Գյուղատնտեսական» մշտական բաժին։ Այդ առթիվ թերթը գրում էր. «Ի նկատի ունենալով, որ չկա գյուղատնտեսական օրգան, որն արդյունք է թղթի և տեխնիկական այլ հարմարությունների ծայրահեղ պակասության, «Կոմունիստի» խմբագրությունը բաց է անում իր թերթի էջերը մեր երկրի գյուղատնտեսության վիճակին ծանոթ բոլոր ընկերների համար։ Հայաստանը լինելով գերազանցապես գյուղատնտեսական երկիր, այժմյան տնտեսական ճգնաժամից կարող է աղատվել նախ և առաջ զարկ տալով հողագործությանը և լավագույն ու նորագույն հիմունքների վրա դնելով իր գյուղացիական տնտեսությունը։ Այս ուղղությամբ կատարված ամեն մի աշխատանք ամենաջերմ աջակցություն կգտնի մեր կողմից»։

---

13 Տե՛ս «Կոմունիստ», 7. XII. 1920։

14 Նույն տեղում, 22. I. 1921։

Թերթի այս նախաձեռնությունը շարժեց շատ մասնագետների միտքը ու նրանք ցանկություն հայտնեցին հանգես գալ գյուղացիությանը հուզող հարցերի շուրջը։ Սկզբում այդ խորագրի տակ կոնսուլտացիոն բնույթի նյութեր էին տպագրվում, որոնք գյուղացիությանը խորհուրդներ էին տալիս՝ ինչպես մշակել հողը, ինչպես պարարտացնել, ըստ երկրի բնակլիմայական պայմանների որ կուլտուրաներին առաջնություն տալ, ինչպիսի խնամք տանել հացահատիկի, բամբակի, ծխախոտի, խաղողի և պտղատու այգիների, գյուղատընտեսական կենդանիների նկատմամբ։ Այս տեսակետից հետաքրքիր է գյուղատնտես Կ. Մելիք-Շահնազարյանի հոդվածաշարքը։ Առաջին հոդվածում, որը կրում էր «Ինչ գրության մեջ է գյուղատնտեսությունը Երևանի գավառում» վերտառությունը, հեղինակը, խոսելով գավառի հողագործության բարձիթողի վիճակի մասին, նշում է այն ուղիները, որոնք, իրոք, կարող են բարձրացնել գյուղատնտեսությունը։ Նույն հոդվածաշարքում առաջին անգամ թերթը խոսակցություն է բացում ցանքաշրջանառության, տեսակավոր սերմերի ֆոնդ ստեղծելու, վնասատուների դեմ կազմակերպված պայքար տանելու, ցրտահերկի և այլ ագրոմիջոցառումների մասին։ Հետաքրքիր է, որ այդ հոդվածների մի զգալի մասը տպագրվում էր մտքերի փոխանակության կարգով, և խմբագրությունը հրավիրում էր մասնագետներին ու գյուղացիներին իրենց կարծիքն արտահայտել։

«Գյուղատնտեսական» խորագրի տակ պարբերաբար տպագրվում էին նաև գարնանացանի նախապատրաստության, պետության կողմից գյուղացիությանը ցույց տրվող օգնության մասին ինֆորմացիաներ, հաղորդումներ, արվում գործնական դիտողություններ և առաջարկություններ։

Թերթն ընդգծում էր, որ երկրում առաջացած լուրջ դժվարությունների, հատկապես պարենային ճգնաժամի հաղթահարումը, հնարավոր է միայն ռուս ժողովրդի և Անդրկովկասի սովետական հանրապետությունների աջակցությամբ։

Եվ, իրոք, արձագանքելով Վ. Ի. Լենինին Հայաստանի հեղկոմի հղած առաջին հեռագրին, ՌԿ(բ)Կ Կենտկոմը և Ռուսաստանի սովետական կառավարությունը օգնության ձեռք մեկնեցին Հայաստանի երիտասարդ հանրապետությանը։ Դեռ 1920 թ. դեկտեմբերի կեսերին, Վ. Ի. Լենինն, ընդունելով ՀՍԽՀ հեղկոմի անդամներ Ա. Մռավյանին, Ս. Տեր-Գաբրիելյանին, խոստանում է անհրաժեշտ օգնություն, ասելով՝ «Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց Խորհրդային Հայաստանին կօգնենք ամեն կերպ»[15]։ Ա. Մռավյանն իր հետ Հայաստան բերեց 600 հազար ռուբլի (ոսկով)։ Հացահատիկով, մանուֆակտուրայով, նավթով, աղով, օճառով և այլ ապրանքներով բարձված գնացքները Բաքվից, Հյուսիսային Կովկասից և երկրի այլ վայրերից Հայաստան եկան։ Մոսկվայից, Հյուսիսային Կովկասից, Ադրբեջանից ժամանեցին կուսակցական ու պետական մոտ 500 աշխատողներ, գիտության գործիչներ, ինժեներներ, գյուղատնտեսներ, ժուռնալիստներ և այլ մասնագետներ։ Այդ առթիվ «Կոմունիստը» 1921 թ. հունվարի 1-ին գրեց. «Երեք տարուց ավելի տնտեսական բլոկադայի ենթարկված, երկարատև քաղաքացիական պատերազմի հետևանքով միանգամայն հյուծված, քայքայված Ռուսաստանը Հայաստանին

15 Ա. Մռավյան, Լենինի մոտ, «Խորհրդային Հայաստան», 29. XI. 1925.

ցույց տված իր օգնությամբ կատարում է միջազգային կոմունիստական հեղափոխության հանդեպ իր պարտքը։ Դա ընդհանուր թշնամու, միջազգային կապիտալիզմի դեմ մահու և կենաց պայքար մղող, կապիտալի լուծը թոթափած և հեղափոխական դրոշի տակ կանգնած երկու երկրների փոխհարաբերության վառ օրինակ է, որը չգիտե պատմությունը»[16]։ Ռուս մեծ ժողովրդի այդ անշահախնդիր, եղբայրական օգնությունը հսկայական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի գոյատևման, քայքայված երկիրը ոտքի կանգնեցնելու գործում։

Տնտեսական ծայրաստիճան քայքայվածությունը, հարյուր-հազարավոր մերկ ու սոված գաղթականների ու որբերի խնամքը, բանակը պարենով ապահովելը, դասալքության ու սաբոտաժի դեմ պայքարը Հայաստանի հեղկոմից պահանջում էին դիմել արտակարգ միջոցների։ Այդ նպատակով մեկը մյուսի ետևից հեղկոմը դեկրետներ ընդունեց պարենժողկոմատ ստեղծելու, նրա իրավունքներն ու պարտականությունները սահմանելու, երկաթուղիները, ավտոտրանսպորտը, փոստ-հեռագիրը և հեռախոսը, ռադիոկայանը ռազմական դրության մեջ հայտարարելու մասին։ Դա փաստորեն ռազմական կոմունիզմին անցումն էր Հայաստանում։ Ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը սկսվեց 1920 թ. դեկտեմբերի 8-ից, երբ «Կոմունիստում» տպագրվեց պարենժողկոմատի հրամանը՝ բնակչության մոտ գտնվող պարենի, վառելիքի հաշվառման մասին։

Թերթը լայնորեն լուսաբանեց նաև այս միջոցառումը, ցույց տալով նրա նշանակությունը ոչ միայն պարենավորման գործի կարգավորման, մի ամբողջ սովալլուկ ժողովուրդ փրկելու, այլև բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքն ամրապնդելու գործում։ Դեռ դեկտեմբերի 11-ին թերթը «Խորհրդային Հայաստանի պարենային ճգնաժամը» առաջնորդողում գրում էր. «Տապալված կառավարությունը թողել է մեզ պարենային կիսավեր մի մեքենա և կիսով չափ պարպված մի քանի մթերանոց, որոնցով անհնարին է բավարարել այն ծով կարիքը, որի մեջ գտնվում են ներկայումս Հայաստանի աշխատավոր ժողովուրդը և նրա վերակազմվող զորաբանակը»[17]։ Պետք էր կերակրել կարմիր բանակին, քաղցած բանվորներին, պետք էր լույս, պետք էր փայտ։ «Գյուղացիությունն արդյոք կամովին կտա՞ր այդ բոլորը, քանի որ գյուղում դեռ ուժեղ էր հարուստ գյուղացիությունը,— գրում է Ալ. Մյասնիկյանը։— Ազատ առևտրի ծառայությանը չէինք կարող դիմել, քանի որ նա մեզ տանելու էր դեպի կապիտալիզմը»[18]։ Ելքն այն է, որպեսզի բացատրական աշխատանքով Հայաստանի գյուղացիության գիտակցությանը հասցվեր, որ բանվոր դասակարգի և գյուղացիության ռազմաքաղաքական դաշինքի տնտեսական հիմքը պարենմասնատրումն է, Ռուսաստանի օրինակով պետությանը փոխարինաբար հաց տալը։ Հարկավոր էր գյուղացիությանն ասել, որ «եթե դու, գյուղացի, պետությանը փոխատվություն անես և հաց տաս, այն ժամանակ բանվորը կարող է արդյունաբերությունը վերականգնել»[19]։

Այս խնդրի լուծման համար կուսակցությանն ու հեղկոմին հսկայական օգնություն ցույց տվեց թերթը։ Գրեթե ամեն օր նրա էջերում հաղորդումներ

---

16 «Կոմունիստ», 19. I. 1921։

17 Նույն տեղում, 11. XII. 1920։

18 Ա. Ֆ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 334։

19 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 29, էջ 651։

էին տպագրվում այն մասին, թե ինչպես այս կամ այն շրջանում տեղական կազմակերպությունները, կոմունիստների, կոմերիտականների ու ակտիվիստների օգնությամբ, բռնագրավում են կուլակների ավելորդ հացահատիկը, կազմակերպում դրա փոխադրումը, միտինգներ հրավիրում, բանաձևեր ընդունում պետությանը հաց ու այլ ապրանքներ տալու մասին։

Նշելով սովի, հացը թաքցնելու և պարենավորման գործը սաբոտաժի ենթարկողների դեմ մղվող պայքարում աշխատավոր գյուղացիությանը լայնորեն ներգրավելու անհրաժեշտությունը, 1920 թ. դեկտեմբերի 11-ին «Կոմունիստը» գրում էր. «Գյուղի ազգաբնակչությունը պիտի անմիջապես տրամադրի իր ունեցած հացի ավելցուկը քաղաքի բանվորության և զորքի կարիքների համար՝ ստանալով դրա դիմաց անդորրագրեր, որոնք իրավունք կտան նրան ապագայում համապատասխան քանակի վալյուտային ապրանք պահանջելու պետական մթերանոցներից»։ Այնուհետև թերթը գավառական հեղկոմների խնդիրն էր համարում հացի ավելցուկների հաշվառումն ու դրանք քաղաքների և ռազմաճակատի կարիքների համար առաքելը։

Այս հորդորները, իհարկե, զուր չանցան։ Ինչպես հաղորդում է թերթը, զգալի քանակությամբ կեր, վառելանյութ և հացահատիկ ամբարվեց, մոտ 71 հազար փութ սերմացու հատկացվեց աշխատավոր գյուղացիությանը՝ 1921 թ. գարնանացանի համար։ Սկսվեց պարենով բեռնավորված սայլերի ու վագոնների հոսանքը դեպի քաղաքներն ու զորամասերը։

Պարենավորման բնագավառում տեղ գտած լուրջ թերությունները ու սխալները նույնպես դուրս չմնացին թերթի տեսադաշտից, և նա մի քանի անգամ հանդես եկավ՝ բացահայտելով դրանց արմատները։ Թերթի 1921 թ. հունվարի 27-ի «Բռնագրավումներ գյուղում» հոդվածում ցավով նշվում էր, որ պարենավորման օրգանները երբեմն անհրաժեշտ ճկունություն հանդես չեն բերում պարենմասնատրման քաղաքականության կիրառման ընթացքում, որի հետևանքով բռնագրավումները հաճախ կատարվում են անսիստեմ, կանոնավոր կերպով հաշվի չեն առնվում գյուղացիության ռեալ հնարավորությունները, թշնամական տարրերին երբեմն հաջողվում է ոչ միայն դուրս պրծնել պարենհարկից, այլև այդ ծանրությունը գցել չքավոր և սակավահող գյուղացիների վրա, պրովոկացիայի ենթարկել նրանց, ստիպելով վաճառել վերջին անասունը, զրկվել ապրուստի վերջին միջոցից։ «Մոտ երկու ամիս է,— գրում էր թերթը,— որ բռնագրավումները շարունակվում են։ Տնտեսապես միանգամայն քայքայված գյուղացիության համար այդ բռնագրավումները գուցե այնքան էլ զգալի չլինեին, եթե գյուղերում բռնագրավումները ծայրահեղ անսիստեմ ու անկազմակերպ չլինեին, եթե չքավոր մասսաները լիովին կազմակերպված լինեին և յուրաքանչյուր գյուղի վրա դրված պարենային պարտականության ամբողջ ծանրությունը բարդեին ունևոր մասի վրա։

Ստեղծված դրության պատճառով բռնագրավումների ներկա եղանակը մի մեծ պատուհաս է հայ գյուղացիության համար»[20]։

Թերթը ցույց է տալիս, որ Հայաստանում խախտվել են բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի լենինյան սկզբունքները, ու հաշվի չեն առնվել գյուղացիության շերտավորումն ու տեղական բնակլիմայական պայմանների առանձնահատկությունները։ Թերթը հետագայում ափսոսանքով է

20 «Կոմունիստ», 27. 1. 1921։

նշում, որ կուսակցության գծի այդ խեղաթյուրումները վարպետորեն օգտագործեց դասակարգային թշնամին, դարձնելով այն իր գլխավոր զենքերից մեկը փետրվարյան հակահեղափոխական խռովությունը հրահրելու գործում։

Եվ այսպես, «Կոմունիստը», Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և բանվորա-գյուղացիական կառավարության առաջին պաշտոնաթերթը՝ 1920—1921 թթ. ամռանը զգալի աշխատանք կատարեց Հայաստանի կոմկուսի և հեղկոմի առաջին ձեռնարկումների պրոպագանդման ուղղությամբ, հակահարված տվեց նրանց, ովքեր գաղտնի ու բացահայտ պայքար էին մղում սովետական իշխանության դեմ։ Թերթն իր բռնած գիծը հետևողականորեն շարունակեց մինչև «փետրվարի 17-ի գիշերը, երբ վերջին համարի տպագրությունը դեռ չվերջացած, ընկավ դաշնակցականների ձեռքը։ Փետրվարի 18-ը վերջ դրեց քննադատության զենքին, սկսվեց զինված քննադատությունը»[21]։ Թերթի հրատարակությունը ժամանակավորապես՝ մինչև փետրվարյան խռովության ջախջախումը, ընդհատվեց։

ПЕРВЫЕ МЕРОПРИЯТИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ АРМЕНИИ И ГАЗЕТА «КОММУНИСТ» («ХОРУРДАИН АЙАСТАН»)

Г. А. ГАБРИЕЛЯН

Резюме

В статье рассматриваются вопросы основания и некоторые страницы истории газеты «Коммунист» («Хорурдаин Айастан») — первого официального органа ЦК КП Армении и ревкома Арм. ССР, которая основана 5 декабря 1920 г., через неделю после установления Советской власти в Армении.

Газета «Коммунист» широко освещала сущность, характер и задачи советской власти: первые ее мероприятия, направленные на разгром старого государственного аппарата, на создание и укрепление социалистического строя. Публикуя первые декреты и другие документы ревкома Арм. ССР, газета одновременно комментировала их, разъясняла цель этих документов и помогала партийным организациям в деле осуществления этих мероприятий.

21 «Խորհրդային Հայաստան», 11. V. 1922։